ԲԱՆԱՎԵԵ

ԿԱՐՈՂԱՆԱԼ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ԱՊՐԵԼ ՄԻԱՍԻՆ*

ՕՐԱԼ ՉԱԼԸՇԼԱՐ

Երբ 1988-ին բանտից դուրս եկա, ինձ հրավիրեցին Համբուրգ: Քաղաքական բանտարկյալների պաշտպանության լիգան ինձ առաջարկել էր մեկ տարի ընտանիքիս հետ Համբուրգում բնակվել: Երկար դիմումներից հետո անձնագիրս ստացա և մեկնեցի Գերմանիա:

1990 թիվն էր. ես աշխատում էի Համբուրգի մի հետազոտական ինստիտուտում: Մի օր զրուցում էի իմ աշխատակիցներից մեկի հետ, և երբ նա իմացավ, որ ես Թուրքիայից եմ, խոստովանեց, որ ինքն էլ է Թուրքիայից: Այնինչ ես կարծում էի, թե գերմանացի է:

Երբ նա ինձ հարցրեց թե ո՞ր քաղաքից եմ, խոսակցությունն ավելի հետաքրքիր դարձավ: Իմանալով, որ Տարսուսից եմ, նա ասաց, որ իր մայրը նույն քաղաքից է: Կարծում եմ՝ 1920-ական թթ., երբ քաղաքը ֆրանսիացիների իշխանության տակ էր, նրա պապը Տարսուսի քաղաքագլուխն էր: Ֆրանսիացիների հեռանալուց հետո նրա ընտանիքը փախել էր Բեյրութ:

Հետագայում նրա մայրը գաղթել էր Գերմանիա և հաստատվել Համբուրգում: Մեր զրույցի պահին իմ մայրը նույնպես Համբուրգում էր: Ես առաջարկեցի, որ մեր մայրերը հանդիպեն և ծանոթանան: Նա ասաց, որ կհարցնի իր մորը և ինձ կհաղորդի նրա պատասխանը: Հաջորդ օրը նա ինձ հայտնեց, որ իր մայրը մերժել է իմ առաջարկը:

Ես լավ եմ հասկանում, թե ինչու իմ աշխատակցի մայրը մերժեց հանդիպել ինձ հետ: Նա չէր ուզում հիշել դառն անցյալը և հանդիպել նոր թուրքերի, որոնց նա համարում էր իր աքսորի պատճառը:

Այդ դեպքն ինձ անչափ հուզեց և դրդեց հետաքրքիր հայացք ձգել անցյալիս: Իմ պապը կաքսայագործ էր: Նրա հետ միասին աշխատում էր մի հայ՝ Հակոբ Գոչերոլլուն: Նրա ընտանիքը մնացել էր Տարսուսում: Պապիս թաղման ժամանակ, երբ բոլորն արդեն հեռացել էին, Հակոբը մոտեցավ շիրիմին, ծնկի իջավ և աղոթեց: Այն փաստը, որ Հակոբն ու իմ պապը պատկանում էին տարբեր ազգի և հավատքի ոչ

* Զեկուցումը կարդացվել է 2000թ. հունիսի 17-ին Ֆրանսիայի Սենատի շենքում կազմակերպված «Հայ-թուրքական երկխոսությունը հայկական հարցի մասին» միջազգային գիտաժողովում:

միայն չէր վնասել նրանց բարեկամությանը, այլ, ընդհակառակը, ամրապնդել էր այն: Աղոթելուց հետո հակառը վեր կացավ, արցունքներն աչքերին: Այդ պատկերն ընդմիշտ մնացել է իմ հիշողության մեջ և մեծ ազդեցություն ունեցել աշխարհայացքիս վրա:

Ես գիտեմ, որ Թուրքիայում շատ շատերն այս տեսակի հիշողություններ ունեն, որոնք մեզ դառնացնում են և վշտացնում: Անցած ամիս ինն սուններկու հոգի Բյույուկ Ադաեցի Ուշխանական կղզիներից մեկը) եկան Հունաստանից: Մենք գրկախառնվեցինք կարոտով, սակայն պատմության արհավիրքները ջնջել էին կղզու վաղեմի հայրստությունը...

Այս պատմելիս բազմաթիվ պատկերներ են անցում աչքերիս առջև... Ներկայումս 100 000 քրիստոնյա կա Թուրքիայում: Սակայն մենք գիտենք, որ XX դարի սկզբին միլիոնավոր քրիստոնյաներ կային: 1915-ի հայերի բռնագաղթը և 1922-ի բնակչությունների փոխանակումը Թուրքիայի և Հունաստանի միջև արագ կերպով նվազեցրին փոքրամասնությունների քանակը:

1940-ական թվականներին հարստության հարկի օրենքի, 1955թ. սեպտեմբերի 6-ի և 7-ի իրադարձությունների, ինչպես նաև 1964թ. բոլոր հույն համաքաղաքացիների մեկ գիշերվա մեջ կատարված բռնագաղթի միջոցով Թուրքիան իրականացրեց մի խոշոր ազգային մաքրագործման ծրագիր:

Կարելի է երկար քննարկել այս իրադարձությունների պատճառները: Կարելի է գտնել բազմաթիվ նյութական և հասարակական պատճառներ: Կարելի է պնդել, թե ազգային մաքրագործման ծրագիրը, որի սկիզբն էր 1915-ի հայերի բռնագաղթը, կարևոր դեր խաղաց ազգային պետության կազմավորման գործընթացում: Թուրք կողմը շարունակում է պնդել, թե հայերը ձեռնածվել էին նրանց կողմից, ովքեր ուզում էին կործանել Թուրքիան: Իսկ հայերը աշխատում են ցույց տալ ամբողջ աշխարհին, որ խոսքը գնում է ցեղասպանության մասին:

Անատոլիայի և Ստամբուլի հույները պնդում են, թե երկու պետությունների բախումները ստիպեցին իրենց հեռանալ հարազատ երկրից և տներից:

Շատ ժամանակ է անցել այդ դեպքերից հետո: Արդյո՞ք հիմա իսկապես անհրաժեշտ է պարզել թե ո՛վ էր ճիշտ և ո՛վ՝ սխալ: Միլիոնավոր մարդիկ ստիպված լքեցին իրենց երկիրը: Անատոլիան զրկվեց իր բնակչությունից և մշակույթներից, որոնք գոյատևել են այդ հողերի վրա հազարավոր տարիների ընթացքում:

Դժբախտաբար, վերջին դարերի ազգայնական գաղափարախոսությունը միայն տառապանք բերեց ժողովուրդներին: Միլիոնավոր մարդիկ իրար սպանեցին՝ տարբեր կրոնների և ազգերի պատկանելու պատճառով: Իրենք տառապեցին և տառապանք պատճառեցին ուրիշներին: Քաղաքական իշխանության համար բախումները, նյութական բարիքներին տիրելու փափագը ներկայացվել են որպես ազգայնականություն և մահ սերմանել ամենուրեք:

Անատոլիան այն հողերից մեկն է, ուր ամենից ավելի տառապեցին: Գրեթե ամենուր կարելի է տեսնել անհետացող պատմության հետքեր: Սակայն տառապանքները շարունակվում են: 15-ամյա պատերազմը, որի պատճառը եղավ քրդական հարցը, անհամար ավերածություններ թողեց: Հազարավոր գյուղեր բնաջնջվեցին, մի ամբողջ հայրենական ժառանգություն

անհետացավ: Միլիոնավոր մարդիկ փախստական դարձան, հազարավոր մարդիկ զոհվեցին:

Ներկայումս, Լոզանի պայմանագրով ճանաչված փոքրամասնություններից հայերը, 50-60 հազարով, ամենախոշորն են: Հաջորդը՝ հրեաներն են, 25-30 հազարով: Ինչ վերաբերում է հույներին, նրանք երեք հազարից պակաս են: Ցավոք, Թուրքիան մինչև այսօր էլ չի կարողացել հիմնել փոքրամասնությունների հետ իր հարաբերությունները ժողովրդավարական հիմունքների վրա, համաձայն մարդու իրավունքների միջազգային չափանիշների:

Փոքրամասնությունները մինչև հիմա էլ բազմաթիվ խնդիրներ ունեն իրենց կարգավիճակի պատճառով: Արդյոք լսե՞լ եք 1936-ի գույքերի հայտարարության օրենքի մասին: Վերջինիս անվան տակ բռնագրավվեցին փոքրամասնությունների գույքերը, խախտելով մարդու իրավունքների սկզբունքները: Տարիներ շարունակ մեր հոդվածներում մենք մատնանշում ենք այս կողոպուտը, որը ոտնահարում է սեփականության իրավունքը: Դժբախտաբար, այս խնդիրը դեռ լուծում չի գտել:

Ամենամեծ վնասը գույքերի հայտարարության օրենքը հասցրել է հայերին: Ցավոք, պետական հաստատությունների անվստահությունը փոքրամասնությունների նկատմամբ բոլորովին չի փոխվել: Չնայած այն փաստին, որ վերջին տարիներին հասարակության վերաբերմունքը շատ ավելի հանդուրժողական է դարձել փոքրամասնությունների նկատմամբ, պաշտոնական դիրքորոշումը դեռ նույնն է:

Հասարակության վերաբերմունքի փոփոխմանը զուգահեռ, փոքրամասնությունները սկսել են ավելի վստահորեն իրենց կարծիքը արտահայտել քան նախկինում: Ուրիշի նկատմամբ հանդուրժողականությունը, որն առաջացել է մտավորականության շրջանակներում, ավելի ու ավելի լայն տարածում է գտնում հասարակության մեջ: Սակայն փոքրամասնությունների քանակի նվազումը և հասարակական կյանքի մեջ կշռի կորուստը առաջ է բերում այն կարծիքը, թե պետության խտրականությունը այլևս ոչ մի կարևորություն չունի:

Այս տեսակետից, կարելի է փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքը համարել ժողովրդավարության ամենակարևոր չափանիշը: Կրոնական, ազգային, սեռային փոքրամասնությունները, որպես կանոն, տարամերժվել են հասարակության կողմից: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նացիստների կողմից հրեաների, կոմունիստների, միասեռականների և գնչուների բնաջնջումը, չնայած իր ծայրահեղական բնույթին, արտահայտում է ընդհանուր միտումը:

Հասարակությունների ժողովրդայնացման հետ մեկտեղ փոքրամասնությունները, ի հեճուկս իրենց կրած տառապանքների, սկսում են շնչել: Թուրքիայում այդ առումով, գուցե և շատ դանդաղ, որոշակի առաջադիմություն է նկատվում: Իսլամականներն ու ցեղապաշտները միշտ էլ առավել անհանդուրժողական են եղել փոքրամասնությունների նկատմամբ: Սակայն նույնիսկ այդ շրջանակներում կարելի է փոփոխություններ տեսնել: Օրինակ, վերջին նախագահական ընտրությունների ընթացքում ծայրահեղ իսլամականների օրաթերթ «Ակիթ»-ը, որ հարձակվել էր Իսմաիլ Ջեմի վրա, մեղադրելով նրան կրոնափոխ հրեա լինելու համար, լուրջ քննադատության ենթարկվեց նույնպես իսլամական «Յենի Շաֆաք» օրաթերթի կողմից: Իսլամամերձ «Քանալ» հեռուստաալիքը սկսել է իր հաղորդումնե-

րի մեջ ավելի նպաստավոր կերպով ներկայացնել փոքրամասնություննե-
ին: Կարելի է նաև այլ օրինակներ բերել: Սակայն կարելի է նաև բացա-
սական օրինակներ բերել: Վերջերս ազդեցիկ ազգայնական և ցեղապաշտ
խմբավորում է ստեղծվել քրդական հարցի կապակցությամբ: Ազգայնամո-
լությունը ներթափանցել է ամենուրեք: Իսկ մտավորականների մի մասն
իրեն ավելի ազգայնապաշտ է դրսևորել այդ հարցում, քան Ազգայնական
շարժման կուսակցության անդամները:

Ամենակարևորը պետության դիրքորոշումն է: Չնայած նկատվում է
որոշ առաջադիմություն, բայց դեռ չի կարելի խոսել իրական փոփոխու-
թյունների մասին: Հունաստանի հետ հարաբերությունների բարելավումը,
անկասկած, լավ նշան է, և այն իր հերթին դրական կերպով է ազդում փոք-
րամասնությունների հետ հարաբերությունների վրա: Սակայն սպասել, որ
դարավոր սովորույթներն ու օրենքները կփոխվեն միանգամից՝ անհիմն լա-
վատեսություն կլինի:

Անցած ապրիլին ես Դիարբեքիրում էի: Մի օր, երբ զբոսնում էի Հանչե-
փեքի հայկական եկեղեցու ավերակների մեջ, հանդիպեցի հայ Անդոն Դա-
յուն, և երկուսս էլ զգացինք մեր հոգու խորքում, որ անցյալի հետ կապը
խզված է: Նա մնացել էր այնտեղ, մենակսացած, որպես ընդմիշտ կործան-
ված պատմության մարմնավորում:

Այժմ հետ դառնալն արդեն անհնարին է: Անատոլիան կորցրել է իր
դարավոր պատմության ժառանգության մեծ մասը: Մենք պետք է ձգտենք
Թուրքիան դարձնել մի երկիր, որտեղ նրանք, ովքեր մնացել են, կարողա-
նան երջանիկ ապրել:

Պարոն Քեբաբջյանը մի հարցազրույցի ընթացքում ինձ ասաց, որ իր
նախնիներից մեկի սարքած մեծ ժամացույցը, որը մինչև օրս էլ տեղա-
դրված է Յոզդաթի մի հրապարակի կենտրոնում, կանգ է առել 1915-ին:
Եկել է ժամանակը՝ նորից աշխատեցնելու այդ ժամացույցը: Եկել է ժամա-
նակը՝ միասին մի նոր էջ բացելու մեր պատմության մեջ, առանց մոռանա-
լու անցյալը: Անատոլիան և Փոքր Ասիան պատկանում են մեզ՝ բոլորիս,
պարունակում են մեր բոլորի մի մասնիկը:

Եկեք միասին վերաշխատեցնենք 1915-ին կանգ առած ժամացույցը: